ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակության այցը ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզ

2018 թվականի մարտի 27-30-ը ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակությունը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի գլխավորությամբ, պաշտոնական այցով գտնվում է ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզում: Պատվիրակության կազմում ընդգրկված էր նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզերի միջև Համագործակցության հուշագիր է ստորագրվել 2011 թվականին:

Հայկական պատվիրակության այցի նպատակը՝ ռուս մեծանուն գրող Մաքսիմ Գորկու 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին մասնակցելն էր: Մարտի 28-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը Նիժնի Նովգորոդ քաղաքում մասնակցել է ռուս մեծանուն գրող Մաքսիմ Գորկու հիշատակին նվիրված հուշարձանի մոտ կազմակերպված ծաղկադրման հանդիսավոր արարողությանը:

Մարտի 29-ին Նիժնի Նովգորոդի Կրեմլում ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզի ղեկավար Գլեբ Նիկիտինի և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի միջև տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում:

Գլեբ Նիկիտինը նշեց, որ Նիժնի Նովգորոդի մարզի և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցությունը զարգանում է արագ տեմպերով: 2017 թվականին առևտրաշրջանառությունը Նիժնի Նովգորոդի և Հայաստանի միջև կազմել է ավելի քան 33 միլիոն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատությամբ այն ավելացել է 15 տոկոսով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է աջակցել ՌԴ Նիժնի Նովգորոդի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև տնտեսական ներուժի և առևտրաշրջանառության ընդլայնման գործում: Դա վերաբերում է ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ շինանյութերի արտադրության, մշակութային և կրթական ոլորտներին: Հայկական պատվիրակության անդամները հետաքրքրվածություն ցուցաբերեցին Նիժնի Նովգորոդի մարզի ԲՈՒՀ-երում սովորող հայ ուսանողների թվի աճի հարցում:

Հանդիպմանը մասնակցում էին նաև Նիժնի Նովգորոդի մարզպետի տեղակալ Եվգենի Լյունինը, Նիժնի Նովգորոդում Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Սերգեյ Մալովը, Նիժնի Նովգորոդի կառավարության արտաքին կապերի վարչության պետ Օլգա Գուսևան, ինչպես նաև Նիժնի Նովգորոդի հայկական համայնքի ղեկավար Աղասի Ալեքյանը:

27–30 марта 2018 года делегация Вайоц Дзорской области во главе с губернатором Вайоц Дзорской области с официальным визитом находился в Нижегородской области. В состав делегации входиле советник губернатора Вайоц Дзорской области Васил Асланян. Делегация приняля участие в мероприятиях, посвященных 150-летнему юбилею писателя Максима Горького.

28 марта 2018 года губернатор Вайоц Дзорской области Республики Армения Арутюн Саргсян принял участие в торжественной церемонии возложения цветов к памятнику Максиму Горькому. Также в мероприятии приняли участие представители органов исполнительной власти и муниципалитетов нижегородского региона.

Как отметил Глеб Никитин в ходе рабочей встречи, «в торгово-экономической сфере взаимодействие региона с Арменией идет поступательными темпами, в 2017 году товарооборот между Нижегородской областью и Республикой Армения составил более 33 миллионов долларов США, увеличившись на 15% по сравнению с 2016 годом.

По словам губернатора Вайоц Дзорской области Арутюна Саргсяна, со стороны Армении будут приложены все усилия для дальнейшего роста экономического потенциала и товарооборота регионов. Это будет касаться как сельскохозяйственной сферы, так и производства строительных материалов и развития сотрудничества в сфере культуры и образования. В частности, представители Армении выразили заинтересованность в увеличении числа армянских студентов, обучающихся в вузах региона.

Встреча была организована департаментом внешних связей правительства Нижегородской области в рамках визита делегации Вайоц Дзорской области Республики Армения по случаю празднования 150-летия Максима Горького. Участниками мероприятия также стали и.о. вице-губернатора Нижегородской области Евгений Люлин, представитель МИД России в Нижнем Новгороде Сергей Малов, директор департамента внешних связей правительства нижегородского региона Ольга Гусева и председатель Нижегородской армянской общины Агаси Алекян.